թերի մեկնությունը՝ հենվելով Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Աղեքսանդրացու և ուրիշների վրա։ Գանձակեցին ասում է, որ Անանիան իր այդ աշխատությունը գրել է «համառօտ վասն դիւրահասութեան ընթերցողաց»։

Թվելով Անանիայի երկասիրությունները, Գանձակեցին ասում է, որ նա գրել է նաև ավետարանների խորհրդական և մտավոր տեսությունը, նրանց համեմատությունը, «գրեաց և լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասեն և ներբողեանն Շողակաթին»[1]։

Միանգամայն ճիշտ է նկատել Գ. վ. Զարբհանալյանը, որ Գանձակեցու հիշատակած ներբողեանն Շողակաթին-ը պետք է ձեռագրերում պահպանված «Երանելւոյ հօր Անանիայի հոգեվարժ փիլիսոփայի ներբողեան, ասացեալ ի սուրբ կաթողիկէն, որ է ի Նոր Քաղաք, որ այժմ կոչի Վաղարշապատ» դրվագը լինի։

Սակայն, Անանիա Սանահնեցու կարևոր աշխատությունը, մեր կարծիքով, պետք է համարվի «Անանիայի վարդապետի հայոց՝ բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց. զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի» վերնագիրը կրող գործը, որ առավել չափով ինքնուրույն է[2] և ունի գեղեցիկ ու զարդարուն ոճ։

Զարբհանալյանը, բացի վերոհիշյալից, Անանիա Սանահնեցու մյուս աշխատությունների ցանկն է դրել իր գրքի մեջ, որտեղ վեց խրատական, կրոնա-բարոյական և աստվածաբանական աշխատություններ են նշված, բոլորն էլ պահպանված հին ձեռագրերի մեջ[2]։

Նույնպիսի մի ցուցակ էլ մեջ է բերել իր հոդվածում Եր. Ս.-ն, որն ունի Անանիա Սանահնեցու 15 աշխատություն[3]։ Անանիա Սանահնեցու «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» աշխատության միջից պատկերամարտության վերաբերյալ հատվածը հրատարակված է Արիստ. Սեղրակյանի «Հայաստանյայց եկեղեցու պատկերահարգությունը» ուսումնասիրության 127—131 էջերում, աշխարհաբար թարգմանության հետ միասին[4]։

Անանիա Սանահնեցու կենսագրությունից գրեթե ոչինչ չգիտենք, բայց գրվածքների քանակից և բնույթից երևում է, որ նա երկար տարիներ ապրել է Սանահնի վանքում և իբրև հոգևորական, բացի պաշտոնական զբաղումներից, եղել է վանական դպրոցի գլխավոր ուսուցիչներից մեկը։

Դիոսկորոսի նշանավոր աշակերտներից մեկն էլ Հակոբոս Սանահնեցին է եղել, որ իր ծննդյան տեղի անունով կոչվել է նաև Քարաբնեցի, իսկ հայրանունով Յակոբ Քարահատայ որդի (Ուռհ., էջ 179)։

1 Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 104։

2 Պատմություն հայերեն դպրության, Վենետիկ, 1865, էջ 470—472։ Այս գրվածքի մասին Կարապետ եպ. Ինիք հաւատոյ-ի հրատարակության առաջաբանում կասկած է հայտնում, որ կարող է Անանիա Նարեկացուն պատկանել (էջ 109)։

3 Եր. Ս.-ն հետևյալ ցուցակն է մեջ բերել՝

ա) Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի
բ) Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց
գ) Խրատ ոգեշահ, թէ որպէս կարասցէ մարդ զմիտս որոշել յերկրաւորացս
դ) Խրատ քահանայից
ե) Ի խորհուրդ Յովհաննու մարգարէի
զ) Անանիայի գրուատ ի սուրբ Մկրտիչն Յովհաննէս
է) Սակս անխտիր հաղորդելոյն Յունաց
ը) Վասն խոնարհութեան
թ) Վասն համբերութեան և խաղաղութեան
ժ) Վասն զղջման և արտասուաց
ժա) Վասն անցաւոր աշխարհիս
ժբ) Վասն ապաշխարութեան
ժգ) Յաղագս խորհրդոց
ժդ) Խրատք (և այլ քարոզներ)
ժե) Մեկնութիւն Մատթէոսի աւետարանին։

«Արարատ», 1901 թ., մայիս և հունիս, էջ 274—275։

4 Հայաստանյայց եկեղեցու պատկերահարգությունը, աշխ. Արիստակես եպիսկոպոսի, ՍՊԲ, 1904, էջ 127—131։